ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հուլիսի 1-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:**

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մկրտիչ քհն. Երանյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

*
* *

**Հուլիսի 3-ին, շաբաթ.—Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխէնի տիկնոջն և Խոսրովիդխտոյն:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Հուլիսի 4-ին, կիրակի.—Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Հուլիսի 7-ին, չորեքշաբթի.—**Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական ներթական ժողովքույթ:

*
* *

**Հուլիսի 10-ին, շաբաթ.—Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ առաքելոյն:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Յուլիսի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Բարի քհն. Մեթենյանը և «Հայր մեր»-ից առաջ ճավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

**Յուլիսի 17-ին, շաբաթ.—Յիշատակ Տապանակին նոյն և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Յուլիսի 18-ին, կիրակի.—ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ ճավուր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 16):

*
* *

**Յուլիսի 19-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կորյուն քհն. Կարապետյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց ճոգեճանգստյան արարողություն՝ «վասն յամօրէն ննջեցելոց»:

*
* *

**Յուլիսի 24-ին, շաբաթ.—Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդըխտոյ կուսին:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Յուլիսի 25-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս արղ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Յուլիսի 31-ին, շաբաթ.—Սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

**Օգոստոսի 1-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Արշավիր վրդ. Գաբուչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

*
* *

**Օգոստոսի 7-ին, շաբաթ.—Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն։**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մյուռոն քհն. Աղամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

*
* *

**Օգոստոսի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ծրանեկյանը։

*
* *

**Օգոստոսի 14-ին, շաբաթ.—Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց։

*
* *

**Օգոստոսի 15-ին, կիրակի.—ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 20)։

Հավարտ ս. պատարագի կատարվեց խաղողի ավանդական օրհնությունն։

*
* *

**Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց։**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»։

*
* *

**Օգոստոսի 21-ին, շաբաթ.**—Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

* * *

**Օգոստոսի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 24-ին երեքշաբթի.—Սրբոցն Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի և Կանանցն Իւղաբերից:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Հաբություն քհն. Դարբինյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 28-ին, շաբաթ.—Սրբոց առաքելոցն Թովմայի, Յակովբայ և Շմաոնի:**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 29-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

